ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇՈՐԺԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Շորժա համայնք, հասցե՝ գ.Շորժա ,
հեռ. 093493792,էլ. փոստ՝ shorja.gyuxapetaran@mail.ru

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇՈՐԺԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ N 23 ՈՐՈՇՈՒՄ

«28 » օգոստոսի 2017

<< ԴԱՍ ԷՆՏԵՐԻԱ ՋՈԼԱՐՔՐԱՖԹՎԵՐՔ >> ՓԲԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 2.5 ՀԱ 5-ՐԴ ԿԱՐԳԻ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ,ԿԱՊԻ ,ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ,ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ/

ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա գյուղական համայնքի ավագանու քննարկմանը դրվեց <<Դաս Էնտերիա Ջոլարքրաֆթվերք>> ՓԲԸ –ին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 2.5 հա 5-րդ կարգի վարելահողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի փոփոխման հարցը ( արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցելու համար) :

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով.

Համայնքի ավագանին որոշում է.

1.Շորժա համայնքի ավագանու 02.09.2013թ. N 13 որոշմամբ հաստատված համայնքի բնակավայրի գլխավոր հատակագծում կատարել հետևյալ փոփոխությունը.
Հիմք ընդունելով <<Դաս Էնտերիա Ջոլարքրաֆթվերք>> ՓԲԸ –ին դիմումը, սեփականության իրավունքով իրեն պատկանող գյուղատնտեսական նշանակության 2.5 հա 5-րդ կարգի վարելահողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի փոփոխման վերաբերյալ և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին կետի, 6-րդ գլխի 14-րդ և 15-րդ հոդվածների պահանջներով <<Դաս Էնտերիա Ջոլարքրաֆթվերք>> ՓԲԸ –ին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 2.5 հա 5-րդ կարգի վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցելու համար:

2. Խնդրել ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը :

Կողմ՝(4) , Դեմ՝(0) Ձեռնպահ՝(0)

Հ.Մուրադյան
Ա. Ավալյան
Վ. Սարգսյան
Է.Ղուկասյան

Համայնքի ղեկավար՝ Ս.Շուշանյան